ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 29 ՀՈՒԼԻՍԻ 2016Թ.
№ 23 (399)

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

## Անհանգիստ սպասումի օրեր...

Վերջին իրադարձությունների քրոնիկոն

- Էրեբունու ՊՊԾ գունդը գրաված «Սասնա ծռեր» խմբի աջակիցներն, ովքեր հուլիսի 17-ից ցույցեր են անցկացնում Խորենացի փողոցում, հուլիսի 25-ին երթ են անցկացրել Երեւանի փողոցներով: Երթի մասնակիցներն անցել են Խորենացի, Նար-Դոս, Վարդանանց փողոցներով՝ հասնելով Սախարովի հրապարակ, Նալբանդյան-Թումանյան-Աբովյան փողոցներով հասել Հանրապետության հրապարակ, որտեղից Տիգրան Մեծի փողոցով վերադարձել Խորենացի փողոց:
- ՊՊԾ գունդը գրաված «Սասնա ծռեր» զինված խումբն արդեն երրորդ մեքենան է այրել: Այդ մասին հայտնել է ոստիկանության լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը:

Նախօրեին զինված խումբն այրել էր գնդի ծառայողական «ԳԱԶել» մակնիշի մեքենաներից մեկը եւ վառվող մեքենան դուրս բերել փողոց: Ըստ ոստիկանության՝ «ԳԱԶել»-ն այրելուց հետո, նրանք փողոց են հանել անվադող, փամփուշտներ լցրել դողի մեջ եւ այրել՝ իրական վտանգ ստեղծելով շրջակա տների բնակիչների համար: «Հիմնադիր խորհրդարանի» անդամ Ալեք Ենիգոմշյանը հայտարարել էր, որ մեքենան այրելը բողոքի նշան էր, քանի որ զինյալներին զրկել են ուտելիքից, բժշկական օգնությունից, անջատել են գնդի

էջ 2

## Երեւանյան դեպքերը համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում

**ԱՄՆ դեսպան. «Բռնությունն ընդունելի տարբերակ չէ»**

Հայաստանում քաղաքական փոփոխություններ կատարելու համար բռնությունը երբեք ընդունելի տարբերակ չի կարող լինել: Այս մասին նշել է ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ռիչարդ Միլսը՝ հուլիսի 20-ին անդրադառնալով մի խումբ զինված անձանց կողմից ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի վրա հարձակմանը:

*«Երեկ ԱՄՆ պետքարտուղարությունում այս մասին հարց հնչեցվեց: Մեր կողմից Հայաստանի իշխանություններին հորդոր եղավ՝ իրավիճակը զսպվածությամբ եւ արհեստավարժ կերպով կարգավորելու վերաբերյալ: Հիմա ժամանակն է, որ բոլոր հայերի կողմից օրենքի գերակայության նկատմամբ հարգանք դրսեւորվի, որպեսզի իրավիճակը խաղաղ հանգուցալուծվի, ինչը, կարծում եմ, այն է, ինչ բոլորն են ցանկանում»,* – «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ նշել է Միլսը:

Նրա խոսքով՝ ԱՄՆ դեսպանությունն ուշադիր հետեւում է իրավիճակին: Դեսպանը դեսպանության եւ իր անունից ցավակցություն հայտնեց զոհված սպայի հարազատներին:

**hraparak.am, Հուլիսի 2016**

**ԵՄ տեղական հայտարարությունը Հայաստանում տեղի ունեցող վերջին իրադարձությունների առնչությամբ (21/07/2016)**

Եվրոպական միության պատվիրակությունը Հայաստանում հավատարմագրված ԵՄ

անդամ պետությունների դիվանագիտական առաքելությունների ղեկավարների համաձայնությամբ տարածում է հետեւյալ հայտարարությունը.

Ընդգծելով, որ քաղաքական փոփոխու-

էջ 2

***Ծնծղանե՞ր, որ ծափում եք, Հասկանո՞ւմ եք, թե ինչ եք ցանել ...***

***ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑ***

## Ո՞վ է մեղավոր Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր սրբավայրում ստեղծված անմխիթար վիճակի համար

Անգեղակոթի Սուրբ Վարդան Զորավոր սրբավայրի մասին գիտի յուրաքանչյուր սիսիանցի: Հատկապես Քրիստոսի պայծառակերպության՝ Վարդավառի տոնին, այն հազարավոր սիսիանցիների ուխտատեղին է արդեն հարյուրավոր տարիներ: Անվանի պատմաբան-բանասեր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս Հասրաթյանը կատարած ուսումնասիրությունների արդյունքում պարզել է, որ սպարապետ Վարդան Մամիկոնյանի դին, ըստ երեւույթին, ամփոփվել է այդ սրբավայրի հարավային պատի տակ: Մահարձանը բարձրացել է, հավանաբար, 7 աստիճանների վրա, որոնք միասին ունեցել են 1,40 մետր բարձրություն: Իր «Որտե՞ղ է թաղված Վարդան Մամիկոնյանը» վերտառությամբ հոդվածում Մորուս Հասրաթյանը բավականին մանրամասն ներկայացնում է դարաշրջանի կարեւորագույն իրադարձությունների շարժառիթները, ապացուցում իր վարկածի ճշմարտացիությունը: Նա մասնավորապես նշում է. *«Ի՞նչը մղեց ինձ մեծն Վարդան Մամիկոնյանի գերեզմանը փնտրելու Հայաստանի անհամեմատ այս հեռավոր անկյունում՝ Շաղատ-Անգեղակոթում եւ ոչ թե Ավարայրի եւ Արարատյան դաշտերում, կամ էլ, ասենք, Վարդանի հայրենիք Տարոն-Մուշում: Նախեւառաջ ինձ այդ համոզմանն է բերել այն դարավոր ավանդությունը, որ պահպանել է բուն Սյունի գավառի (արդի Սիսիան) բնակչությունը՝ այդ վայրը համարելով «Վարդան զորավորի» գերեզմանի տեղը: Անգեղակոթից կես կիլոմետր դեպի Նախիջեւան տանող խճուղու եզրին, Շաղատի դիմացի ժայռերի տակ գտնվող «Վարդան զորավոր» կոչվող ուխտատեղիում, մնացել է բազմիցս վերաշինված անշուք մի եկեղեցի, որի շրջապատում եւ փոքրիկ գավթում ընկած են բազմաթիվ գերեզմանաքար-խաչքարեր: Այս վայրը դարեր շարունակ սիսիանցիների համար եղել է ուխտատեղի եւ ճանաչվել որպես Վարդան Մամիկոնյանի գերեզման: Նախապես պետք է նկատել, որ ազգային ավանդությունները՝ կապված տվյալ վայրի եւ այդ վայրում տեղի ունեցած պատմական մեծ ու փոքր դեպքերի հետ, անջնջելի զորությամբ պահպանվում են դարերով, մանավանդ, երբ տվյալ վայրի բնակչությունը չի ենթարկվել արտագաղթերի, այլ ընդհակառակը՝ լրացվել է եկվորներով: Նույնիսկ բավական էր, որ ավերված գյուղերում մնային մեկ-երկու ընտանիք, որպեսզի նորեկներին հաղորդեին շրջապատի տեղանունները, ավանդությունները, բանահյուսական փշրանքները, սրբավայրերի հետ կապված ուխտագնացության օրերը, ծեսերը, պատմական անցքերը եւ այլն»:*

Վերոնշյալ հոդվածին ընթերցողները կարող են ծանոթանալ «Սյունյաց երկիր» թերթի՝ Մորուս Հասրաթյանին նվիրված հատուկ համարում (N 20, 30 հունիսի 2016թ.): Միայն նշենք, որ այս հոդվածում պատմաբան-բանասերը բացատրում է նաեւ, թե ինչու է Վարդավառի տոնին սրբատեղին առավել մարդաշատ լինում, այլ ոչ թե Վարդանանց տոնին: Բանն այն է, որ պաշտվել է ժայռի տակից բխող Կաթնաղբյուրը կամ Սուրբ աղբյուրը: Այդ ջուրը, որ

էջ 6

# Անհանգիստ սպասումի օրեր...

## Վերջին իրադարձությունների քրոնիկոն

էջ 1

էլեկտրամատակարարումը: Ավելի վաղ զինված խումբն այրել է նաեւ «Շեւրոլե» մակնիշի ավտոբուս:

- ՀՀ ԱԱԾ-ն հուլիսի 25-ին տարածած հայտարարության մեջ նշում է՝ *«…. Իրավիճակի խաղաղ հանգուցալուծմանը տանող ճանապարհ դեռ կա եւ կոչ է անում զինված խմբի բոլոր անդամներին անհապաղ դադարեցնել իրենց հանցավոր գործունեությունը, ներառյալ՝ մարդկանց կյանքի, առողջության եւ գույքի դեմ ուղղված բռնարարքները, կամովին վայր դնել զենքն ու առանց դիմադրության հանձնվել իշխանություններին: Դրա համար թեեւ քիչ, բայց դեռ ժամանակ կա»:*
- Հուլիսի 25-ի երեկոյան, ժամը 20.00-ից մինչեւ կեսգիշերն ընկած ժամանակահատվածում, ՊՊԾ գնդի տարածքում գտնվող զինված խմբի անդամները նախ այրել են գնդի տարածքից դուրս՝ փողոցում կանգնած ոստիկանության ավտոբուսը, ապա գնդի տարածքից փողոց են դուրս բերել ու այրել եւս երկու ավտոմեքենա: Այդ ընթացքում գնդի տարածքից պարբերաբար արձակվել են կրակոցներ: Ժամը 01.00-ի սահմաններում գնդի տարածքից դուրս է եկել ոստիկանության «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենան ու շարժվել ոստիկանության էրեբունու բաժնի ուղղությամբ՝ դեպի արգելապատնեշում կանգնած ոստիկանական շղթան: Մեքենան ընդհուպ մոտեցել է շղթային, ինչից հետո իրավապահները մեքենայի ընթացքը կասեցնելու եւ դրանում գտնվող զինված անձանցից անմիջականորեն բխող իրական վտանգը կանխելու համար, կրակ են բացել մեքենայի շարժիչի վրա: Մեքենան ձախ կիսաշրջադարձ է կատարել, հնչել են կրակոցներ, որից հետո իրավապահները կրակ են բացել մեքենայի անվադողերի ուղղությամբ: Ի պատասխան՝ հնչել են կրակոցներ, որոնց իրավապահները չեն պատասխանել: Հրաձգության հետեւանքով մեքենայում գտնվող երեք անձանցից երկուսը ոտքերի վնասվածքներ են ստացել եւ նահանջել գնդի տարածք: Իրավապահներն անմիջապես բուժօգնություն են կանչել եւ առաջարկել վիրավորներին տեղափոխել հիվանդանոց, ինչին զինված խմբի անդամները համաձայնել են: Երկու վիրավորն էլ գտնվում են հիվանդանոցում եւ ստանում են անհրաժեշտ բժշկական օգնություն: Վիրավորված անձինք են՝ Աշոտ Պետրոսյանն ու Հովհաննես Հարությունյանը:
- Հուլիսի 26-ին ՀՀ ԱԱԾ-ն տարածել է հայտարարություն, ըստ որի՝ *«….Զինված խմբի անդամների՝ հետզհետե ավելի վտանգավոր դարձող հանցավոր վարքագիծն անցնում է բոլոր սահմանները, որոնցում հնարավոր է դրսեւորել ողջամիտ զսպվածություն: Ուստի, նոր հանցանքների կատարումը կանխելու եւ խափանելու նպատակով Ազգային անվտանգության ծառայությունն այսուհետ ստիպված է լինելու ձեռնարկել կոնկրետ իրադրությամբ թելադրված ավելի կոշտ միջոցներ»:*
- ՀՀ ոստիկանությունը հուլիսի 26-ին տարածել է հայտարարություն, որի մեջ մասնավորապես նշվում է. *«….Խորենացի փողոցի արգելափակված հատվածում առկա է լարվածության կտրուկ սրման իրական եւ անմիջական վտանգ՝ անկանխատեսելի հետեւանքներով: Հետեւաբար, հավաքի մասնակիցների կյանքին եւ առողջությանը, ինչպես նաեւ հասարակական անվտանգությանը սպառնացող վտանգը հնարավոր չէ կանխել այլ կերպ, քան հավաքը մեկ այլ վայր տեղափոխելու միջոցով: Ուստի ՀՀ ոստիկանությունը պահանջում է հավաքի փաստացի ղեկավարներից՝ սեղմ ժամկետում հավաքը տեղափոխել մեկ այլ վայր, որտեղ խաղաղ հավաքներին աջակցելու ՀՀ ոստիկանության պարտականությունների սահմաններում հնարավոր կլինի ապահովել հավաքի մասնակիցների անվտանգությունը: Հակառակ դեպքում ՀՀ ոստիկանությունը չի ունենալու այլ միջոց, քան օրենքով սահմանված կարգով դադարեցնել այդ հավաքը»:*
- Երեւանի էրեբունի վարչական շրջանի Խորենացի փողոցում հուլիսի 26-ին մեկնարկած հանրահավաքն ավարտվեց երթով: Հազարավոր ցուցարարներ զուռնա-դհոլի հնչյունների ներքո վանկարկումներով անցան Նար-Դոս-Չարենց-Նալբանդյան-Հանրապետության հրապարակ-Տիգրան Մեծ փողոցներով: Նրանք կանգ առան ոստիկանության եւ ԱԱԾ-ի գլխավոր շենքերի մոտ՝ որպես բողոքի նշան հուլիսի 26-ի գիշերը տեղի ունեցած իրադարձությունների:
- Հուլիսի 26-ի երեկոյան ՊՊԾ գնդի տարածքում իրավիճակը լարվել է: Այս մասին ասել է ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը: Իրավապահներին են հանձնվել զինված խմբի անդամներ Գագիկ Եղիազարյանն ու Արամ Հակոբյանը:

Տեղի է ունեցել փոխհրաձգություն, որի հետեւանքով վիրավորվել է իրավապահներից մեկը, ինչպես եւ Պավել Մանուկյանն ու նրա որդի Արամը: Երեքն էլ անմիջապես տեղափոխվել են հիվանդանոց:

- Հուլիսի 26-ի գիշերը հաղորդվել էր, որ, ըստ զինված խմբի, ՊՊԾ գնդի տարածքում կա եւս երկու վիրավոր: Իրավապահները նրանց բուժօգնություն տրամադրելու կոչ էին արել եւ մերժում ստացել: Վիրավորներին բուժհաստատություն տեղափոխելու կոչ էին արել նաեւ հարազատները: Իրավապահներն ապահովել էին բոլոր անհրաժեշտ պայմանները: Իսկ երբ բժիշկները ժամանել են, նրանց պատանդ են վերցրել:

Ինչպես տեղեկացնում է Ոստիկանության մամուլի եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետ Աշոտ Ահարոնյանը, իրավապահները միջոցներ են ձեռնարկում պատանդված բժիշկներին բանակցությունների միջոցով ազատելու համար:

- ՊՊԾ գունդը գրաված «Սասնա ծռեր» զինված խմբի 31 անդամներից 24-ը շարունակում են մնալ ՊՊԾ գնդում:
- Երեւանի հիվանդանոցներում, հուլիսի 27-ի առավոտյան ժամը 10-ի դրությամբ, ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության գնդի տարածքում զինված միջադեպի եւ հետագա զարգացումների հետեւանքով ստացիոնար բուժօգնություն է ստանում 14 հիվանդ, որից 6-ը՝ ոստիկան, 3-ը՝ զինված խմբի անդամ:

Հուլիսի 26-ի գիշերը տեղի ունեցած փոխհրաձգության հետեւանքով «էրեբունի» բժշկական կենտրոն են տեղափոխվել իրավապահ մարմինների 1 աշխատակից եւ զինված խմբի 2 անդամ՝ հրազենային վնասվածքներով: Զինված խմբի վիրավորում ստացած անդամները վիրահատությունից հետո գտնվում են վերակենդանացման բաժանմունքում: Նրանց վիճակը մասնագետները գնահատում են կայուն ծանր:

Հոսպիտալացված ոստիկանը բաժանմունքում է, վիճակը գնահատվում է բավարար:

Հուլիսի 17-ին հոսպիտալացված ոստիկանի վիճակը կայուն ծանր է, կա ակնհայտ դրական շարժընթաց:

Զինված խմբի 2 անդամ տեղափոխվել է դատապարտյալների հիվանդանոց:

- Ըստ mediamax.am-ի՝ «Սասնա ծռեր» խմբավորումը ներկայացրել է հուլիսի 26-ի գիշերվա միջադեպի իր վարկածը: *«Պայմանավորվածություն է ձեռք բերվել ոստիկանությանը հանձնել վիրավոր ապստամբին: Հանձնելու գնացել է Պավլիկը: Ոստիկանությունը կրակ է բացել, վիրավորել նրան: Արամը՝ Պավլիկի տղան, վազել է դեպի հայրը, նրան էլ են վիրավորել: Երկու մյուս տղաները՝ Գագիկն ու, կարծես, Արամը, պատգարակներ են հանել՝ վիրավոր ընկերներին տանելու: Նրանց ձերբակալել են: Գնդում հիմա կա մի թեթեւ վիրավոր, որին գնդի տարածքում բժշկական օգնություն է ցուցաբերվում: Տղաների տրամադրությունը մարտական է»,* – ասված է հաղորդագրության մեջ:

**Ըստ մամուլի հաղորդումների**

## Աշոտ Մինասյանը՝ նոր միջնորդ «Սասնա ծռեր»-ի եւ իշխանությունների միջեւ

**«Սասնա ծռեր» խմբավորման եւ իշխանությունների միջեւ բանակցությունները շարունակվում են:**

Միջնորդի դերում է «Սիսական» ջոկատի հրամանատար, Արցախյան պատերազմի վետերան Աշոտ Մինասյանը, ով վայելում է եւ՛ «Սասնա ծռեր»-ի, եւ՛ իշխանությունների վստահությունը:

Մինչ այդ միջնորդի առաքելությունը կատարում էր Արցախի հերոս, գեներալ-մայոր Վիտալի Բալասանյանը:

Աշոտ Մինասյանի հետ վերջին անգամ հեռախոսազրույց ունեցանք հուլիսի 24-ի առավոտյան, երբ դեռ չէր ստանձնել միջնորդի դերը: Նա քաջատեղյակ էր բանակցությունների ընթացքին եւ մտահոգ էր ստեղծված իրավիճակով:

**«Քանի դեռ հանգույցը չի լուծվել՝ չեմ կարող վերադառնալ Սյունիք»,** - ասաց Աշոտ Մինասյանը մեր զրույցի ընթացքում:

Հուլիսի 17-ից Աշոտ Մինասյանի հետ քանիցս հեռախոսով քննարկել ենք մայրաքաղաքում ստեղծված ծանր կացությունը: Հատկապես մերժում էր պատանդառությունը եւ պատրաստակամություն հայտնում դիմել ծայրահեղ քայլի՝ անձամբ փոխարինել պատանդներին, միայն թե իրեն հնարավորություն տան, միայն թե նրանք անվնաս ազատ արձակվեն:

Հիշեցնենք, որ Աշոտ Մինասյանը մեծ հեղինակություն է վայելում սիսիանցի ազատամարտիկների շրջանում:

Արցախյան գոյամարտում՝ 1993թ. օգոստոսի 30-ին, կորցրել է կրտսեր եղբորը՝ 23-ամյա Աղվան Մինասյանին:

2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ եւ հաջորդած օրերին, սիսիանցի կամավորականների գլուխ անցած, գտնվում էր ղարաբաղ-ադրբեջանական շփման գծի Մատաղիսի դիրքերում՝ իր երկու որդու հետ միասին:

Դժվար է կանխատեսել, թե ինչ արդյունք կտա Աշոտ Մինասյանի առաքելությունը: Բայց վստահ ենք, որ ոչ մի վայրկյան նրան չեն լքի պատասխանատվությունն ու ողջամտությունը, որ նա կգործի ամենայն ազնվությամբ ու անկեղծությամբ եւ ամեն ինչ կանի, որ Հայաստանի Հանրապետության հեղինակությանն արդեն իսկ վնասած զինված միջադեպը հնարավորինս արագ եւ անարյուն լուծում ստանա:

**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**
**25 հուլիսի 2016թ.**

# Երեւանյան դեպքերը համաշխարհային հանրության ուշադրության կենտրոնում

էջ 1

թյան նպատակով ուժի կիրառումն անընդունելի է՝ մեր զորակցությունն ենք հայտնում ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ՊՊԾ գնդի հրամանատարի տեղակալ, գնդապետ Արթուր Վանոյանի ընտանիքին: Ոստիկանության էրեբունու բաժանմունքում տեղի ունեցած դեպքերից տուժողներին մաղթում ենք արագ եւ լիարժեք ապաքինում:

Մտահոգությամբ ընդգծելով անհամաչափ ուժի կիրառման եւ ոստիկանության կողմից իրականացված զանգվածային ձերբակալությունների մասին զեկույցները՝ իշխանություններին կոչ ենք անում հարգել համաչափության սկզբունքը խաղաղ բնույթի, ինչպես նաեւ բռնությամբ ուղեկցվող հանրային բողոքի ակցիաների առնչությամբ: Միաժամանակ, ցուցարարներին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ բռնի գործողություններից՝ իրենց քաղաքացիական իրավունքների իրացման ընթացքում:

Ի գիտություն ընդունելով նաեւ մարդու իրավունքների պաշտպանի կողմից կատարված հայտարարությունները՝ հորդորում ենք լիարժեք հետաքննություն կատարել ոստիկանների կողմից իրականացված բոլոր իրավախախտումների մասին հաղորդումների առնչությամբ, այդ թվում՝ նրանց կողմից ոչ պատշաճ վերաբերմունքի եւ իրավապաշտպանների եւ բուժօգնության մերժման առնչությամբ:

**eeas.europa.eu**

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը քննադատող հայտարարություն է տարածել Երեւանում ՊՊԾ գնդի գրավման վերաբերյալ Եվրոպական միության հայտարարության վերաբերյալ:

ԵՄ պատվիրակությունը, մասնավորապես, հայտարարել էր, որ քաղաքական փոփոխության նպատակով ուժի կիրառումն անընդունելի է, զորակցություն է հայտնել գնդապետ Արթուր Վանոյանի ընտանիքին: Միաժամանակ, ընդգծելով անհամաչափ ուժի կիրառման եւ ոստիկանության կողմից իրականացված զանգվածային ձերբակալությունների մասին զեկույցները՝ ԵՄ-ն իշխանություններին կոչ է արել հարգել համաչափության սկզբունքը խաղաղ բնույթի, ինչպես նաեւ բռնությամբ ուղեկցվող հանրային բողոքի ակցիաների առնչությամբ: Միաժամանակ հայտարարվել է, որ ցուցարարներին անհրաժեշտ է ձեռնպահ մնալ բռնի գործողություններից՝ իրենց քաղաքացիական իրավունքների իրացման ընթացքում:

Մոսկվան, սակայն, գտնում է, որ փաստաթղթում *«զարմանալի կերպով տեղ չի գտնվել հանցավոր գործողությունների՝ ոստիկանության շենքի վրա զինված գրոհի, ոստիկանի սպանության, պատանդներ վերցնելու առնչությամբ: Դրա փոխարեն լուրջ շեշտ է դրվել իշխանություններին ներկայացվող պահանջների վրա՝ «համաչափություն» պահպանել եւ հետաքննել «ոստիկանության անհամաչափ գործողությունները»»*:

Ըստ ՌԴ ԱԳՆ-ի, *«դժվար է ազատվել տպավորությունից, որ ԵՄ դիվանագետները զուգերգում են այն ուժերին, որոնք փորձում են ապակայունացնել ներքաղաքական իրավիճակը»:*

**Մոսկվան դատապարտում է երեւանյան դեպքերը դատապարտող ԵՄ-ի հայտարարությունը**

**1in.am, 2016-07-23**

# Մեղրու գյուղատնտեսական սպասարկման կենտրոնը բացեց դռները

Հունիսի 24-ի օրը Մեղրիում նշանավորվեց նրանով, որ քաղաքի Անդրանիկ Զորավարի 5 հասցեում «Ագրոբիզնեսի եւ գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամը Շվեյցարիայի միջազգային զարգացման գործակալության (SDC) կողմից ֆինանսավորվող «Շուկաներ Մեղրու համար» ծրագրի շրջանակում տեղացի ներդրող Արմեն Ավետիսյանի հետ համագործակցությամբ բացեց գյուղատնտեսական սպասարկման ժամանակակից կենտրոն:

Կենտրոնի բացումն ունի նախապատմություն. 2014-ի ապրիլին համագործակցելով ծրագրի հետ՝ Արմեն Ավետիսյանն իր սեփական ներդրումներով Մեղրի համայնքում հիմնադրեց գյուղատնտեսական ապրանքների սպասարկման «Այգեգործ» խանութ-կենտրոնը: Այն գործունեության կարճ ժամանակահատվածում հասցրել է սպասարկել ավելի քան 1400 ֆերմերային տնտեսության եւ տարածաշրջանում ներկայացրել է գյուղատնտեսական ապրանքների 14-ից ավելի մատակարարների ապրանքները: Խանութ-կենտրոնի ներսում գործել են նաեւ գյուղատնտեսական տեխնիկայի նորոգման եւ խորհրդատվական ծառայություններ: Եվ ահա խանութ-կենտրոնը, զարգացնելով իր գործունեությունը, վերահիմնադրվում է որպես գյուղատնտեսական սպասարկման կենտրոն: Կենտրոնի շինարարությունն իրականացրել է Մեղրու «Ճանապարհների շինարարություն եւ շահագործում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (տնօրեն՝ Ազատ Գասպարյան): Բացման արարողությանը մասնակցում էր «Շինինդուստրիա գիտատեխնիկական կենտրոն» ՍՊ ընկերության տնօրեն Կարեն Շավարշյանը, ով իրականացրել է օբյեկտի տեխնիկական հսկողության աշխատանքները: Նրա տեղեկացմամբ՝ շինաշխատանքները կատարվել են կարճ ժամկետում եւ բարձր որակով: Ի դեպ, դրանում դժվար չէր համոզվել՝ մտնելով կենտրոն, ծանոթանալով հարմարություններին:

Նորաբաց կենտրոնի տարածքում ցուցադրված էին զանազան գյուղսարքավորումներ՝ կթի ագրեգատ, խոտհնձիչներ, սրսկիչներ, այլ գյուղգործիքներ: Խանութն էլ առաջարկում էր գյուղապրանքների լայն տեսականի՝ ամենատարբեր գյուղգործիքներ, պարարտանյութեր եւ թունաքիմիկատներ, անասնաբուժական, մեղվաբուծական դեղորայքներ եւ գործիքներ: Մեղրեցի ֆերմեր Անդրանիկ Մարտիրոսյանը «Այունյաց երկրի» հետ զրույցում նշեց, որ «Շուկաներ Մեղրու համար» ծրագրի շրջանակում դասընթացների եւ սեմինարների է մասնակցել, ինքը հիմնականում ջերմոցային տնտեսություն է վարում, չորս հազար քառակուսի մետր պտղատու այգի ունի, այս տարի էլ պիստակի այգի է հիմնել: Ֆերմեր Արամ Հարությունյանը (Լեհվազ) տեղեկացնում է, որ մեկ հեկտարի չափով արքայանարնջի այգի ունի, նախորդ տարի 15 տոննա բերք է հավաքել, գոհ է խորհրդատվությունից, որ մինչ այդ տրամադրում էր «Այգեգործ» խանութ-կենտրոնը. «Անցյալ տարի մի խոտհնձիչ եմ վերցրել, եթե նախկինում խոտը մի ամսում էի հնձում, խոտհնձիչով՝ երեք օրում: Հաճելի է տեսնել, որ կենտրոնը գյուղատնտեսությամբ զբաղվողի համար ամեն ինչ առաջարկում է»:

Ինչպես տեղեկացանք մամլո հաղորդագրությունից, կենտրոնում գործելու է նաեւ հողի անալիզի համար նախատեսված լաբորատորիա, կազմակերպվելու են օտարերկրացի մասնագետների կողմից անցկացվող սեմինարներ եւ դասընթացներ: Ակնկալվում է, որ կենտրոնի ծառայություններից կօգտվի Սյունիքի մարզի Մեղրու տարածաշրջանի 13 համայնքի մոտ 1800 ֆերմերային տնտեսություն:

Կենտրոնի բացման արարողությանը մասնակցում էին հանրապետության տարբեր գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, գյուղատնտեսության ոլորտի աշխատողներ (ֆերմերներ), համայնքապետներ, տարբեր տարիքի եւ զբաղմունքի մարդիկ: «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» (ԱՐԴԻ) ծրագրի ղեկավար Սուսաննա Խաչատրյանը շնորհավորելով կենտրոնի բացման առթիվ, համոզմունք հայտնեց, որ կենտրոնական նպաստ կբերի ֆերմերների գիտելիքների եւ հմտությունների ավելացմանը, գյուղատնտեսական առաջավոր փորձի ներդրմանը: Նա նաեւ տեղեկացրեց, որ ծրագիրը համաֆինանսավորել է կենտրոնի կառուցումը, նաեւ Մեղրի քաղաքում ու հարակից չորս համայնքում իրականացնում է ջրագծի կառուցում եւ վերանորոգում, որոնք առաջիկա ամիսների ընթացքում կատարվելու են ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ:

ՀՀ տարածքային կառավարման եւ զարգացման նախարարի առաջին տեղակալ Վաչէ Տերտերյանն իր խոսքում նշեց, որ շվեյցարական համադաշնության ծրագրերին Սյունիքում ծանոթ են մոտ տասը տարի, դրանք նախապես իրականացվում էին Սիսիանի եւ Գորիսի տարածաշրջաններում, նախ՝ սոցիալական, հետո՝ գյուղատնտեսության ոլորտներում, իսկ այժմ աշխատանքները տեղափոխվել են դեպի հարավ՝ Մեղրու տարածաշրջան: *«Ամեն ինչ պիտի արվի, որ շուկաները հասանելի լինեն Մեղրուն եւ Մեղրին հասանելի լինի շուկաներին: Կենտրոնը պիտի լինի այն բազան, որ հնարավոր կդարձնի Մեղրիում*

էջ 7

# Մեղրիում հրդեհված շենքի բնակիչները շուտով կվերադառնան իրենց բնակարան

2015թ. հունիսի 13-ին Մեղրու Անդրանիկի փողոցի թիվ 7 բազմաբնակարան շենքում եւ Լեւոն Ազատյանին պատկանող առանձնատանը բռնկված հրդեհի հետեւանքները «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հովանավորությամբ գրեթե վերացվել են: Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքին ծանոթանալու նպատակով 2016թ. հուլիսի 15-ին Մեղրի էին այցելել «ԶՊՄԿ» ՓԲԸ վարչական տնօրեն Վահե Հակոբյանը, կոմբինատի գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Նարեկ Ամբարյանը:

Իրականացվող շինարարական աշխատանքների ծրագրի ղեկավարներն ու պատասխանատուներն են կոմբինատի շինարարության գծով տնօրենի տեղակալ Կարեն Մկրտչյանը եւ կոմերցիոն տնօրենի շինարարության գծով տեղակալ Աշոտ Այվազյանը: Ինչպես տեղեկացրեց Կարեն Մկրտչյանը, բազմաբնակարան շենքի վերակառուցման եւ առանձնատան կառուցման աշխատանքների համար կոմբինատը հատկացրել է շուրջ 170 մլն դրամ: Շինարարական աշխատանքներն իրականացնում է «Կապանի նորոգշին» ՍՊԸ-ն (տնօրեն՝ Ռազմիկ Փարսյան), իսկ աշխատանքների 95%-ն արդեն ավարտվել է, 5%-ը կավարտվի հուլիսի վերջին:

Կոմբինատի ղեկավարությունը, ծանոթանալով կատարված աշխատանքներին, բարձր գնահատեց դրանց որակը: Համայնքի ղեկավար Արշավիր Հովհաննիսյանը եւ շենքի բնակիչներն իրենց երախտագիտությունը հայտնեցին կոմբինատի ղեկավարությանը՝ հովանավորության եւ այս ողջ ժամանակահատվածում տուժած ընտանիքներին աջակցելու համար: Ի դեպ, ժամանակավորապես հյուրանոցում տեղակայված ընտանիքների ծախսած էլեկտրաէներգիայի գումարը փոխհատուցում է Զանգեզուրի ՊՄԿ-ն:

Բնակիչները հարց են բարձրացրել՝ հնարավորության դեպքում կատարել նաեւ շենքի մյուս հատվածի վերանորոգումը: Կոմբինատի ղեկավարությունը խոստացավ իրագործել խնդրանքը՝ պայմանավորելով դա ընկերության ֆինանսական վիճակով:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Լրացավ մանկապարտեզի հիմնադրման 85-ամյակը

**Տարեվերջյան հանդես էր Գորիսի Վազգեն Սարգսյանի անվան թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատությունում: Նմանատիպ միջոցառումներից այն տարբերվում էր թե իր ձեւով եւ թե բովանդակությամբ: Լրացել էր քաղաքի առաջին մանկապարտեզի հիմնադրման 85, նախակրթարանը Վազգեն Սարգսյանի անվամբ կոչելու 5-ամյակը: Բացի այդ, լրացել էր 25 տարի այն օրից, ինչ նախադպրոցական հաստատության ղեկավարումը ստանձնեց անվանի մանկավարժ, մանուկների սիրելի բարեկամ Սաիդա Ադունցը: Ահա այս երեք հոբելյանական տարեթվերի խորհուրդն էին միջոցառման հիմքում դրել նրա կազմակերպիչները:**

Նախապես պլանավորված է եղել այդ առթիվ համաքաղաքային հանդիսություն կազմակերպել մշակույթի պալատում, սակայն ապրիլյան հայտնի դեպքերը շտկումներ մտցրին ծրագրում: Հանդիսությունը կազմակերպվեց նախակրթարանին հարող բակում: Կազմակերպիչները հմտորեն էին օգտագործել տեղանքի ընձեռած հնարավորությունները՝ ծառերն ու թփերը, ծաղկանոցները, սիզամարգերը, ջրավազանը, որոնք էլ լրացուցիչ տոնական տեսք ու տրամադրություն էին հաղորդել միջոցառմանը: Պակասն էլ լրացրել էին հանդիսության գլխավոր «մեղավորների» տոնական հագն ու կապը, նրանց ժպիտները:

Հանդեսը կրում էր «Մանկապարտեզի հեքիաթային մեկ օրը» անվանումը: Սկզբում սաները կատարեցին հանդիսության օրհներգը, որի հեղինակը հայտնի երգահան Պասկեւիչյանն է, դրանից հետո երգչախմբի փոքրիկ անդամները դեպի երկինք բաց թողեցին խաղաղության ճերմակ-ճերմակ աղավնիներ: Նրանց փոխարինում են զինվորական համազգեստով փոքրիկները, որոնց գլխավերեւում ծածանվում է հայկական եռագույնը. զինվորական քայլերգով նրանք տողանցում են նախագահության առջեւով՝ հայացքները դեպի այդ ամենը վերահսկող սպարապետ Վազգեն Սարգսյանի մեծադիր նկարը: Ընդհանրապես ամբողջ միջոցառման առանցքում հայրենասիրության, խաղաղության, ազգային արժեքների հանդեպ հավատարմության գաղափարն էր գերիշխում: Դա թելադրում է ժամանակը, դա պահանջում է այն մեծ անհատը, ում անունն է կրում նախակրթարանը:

Մեր ձեռքին է նախակրթարանի հոբելյանի առթիվ լույս ընծայված փոքրիկ բրոշյուրը, որը պատմում է մանկապարտեզի երախտավորների, նրանց հաղթահարած անասելի դժվարությունների մասին: 1924-1925 թվականներին մանկապարտեզի վարիչն էր Մարիամ մորաքույրը, իսկ մանկապարտեզը գործել է Գորիսում հայտնի Մալունց Ղազարի տանը: Այդ դժվարին, բայց պատվավոր պաշտոնը հետագայում զբաղեցրել են Լուսիկ Բաղիրյանը, Մարո Մինասյանը, Պրոֆիկ Բաբալարյանը, Ժենյա Գզոյանը, Էմմա Բարսեղյանը, Գրետա Տատինցյանը, Զոյա Շեգունցը, Էմմա Պետրոսյանը, Արմիկ Շալունցը: Վերջին քսանհինգ տարում հիրավի պատվավոր այդ աշխատանքը կատարում է Սաիդա Ադունցը: *«Այս մեծ աշխարհում ես ունեմ իմ փոքրիկ աշխարհը, աշխարհ, որով ես ապրում եմ ամեն օր, որով ես ապրեցնում եմ հազարավոր մանուկների, որով ինձ ապրեցնում են հազարավոր մանուկներ… »:* Այսպես է նա բնութագրում իր աշխատանքը եւ մասամբ էլ իրեն: Ասում են՝ մարդկային երջանկությունը հյուսվում է մի շարք գործոններից, որոնցից մեկն էլ սիրած գործն է, մասնագիտությունը: Սաիդա Ադունցը նման անհատներից է, նա ոչ միայն սիրում է մասնագիտությունը, այլ նաեւ զբաղվում դրանով:

Ընթերցողիս ուշադրությունը մի շատ հետաքրքիր գործառույթի վրա եմ հրավիրում: Բոլոր այն համայնքներում, որտեղ կա երկուսից ավելի դպրոց կամ նախադպրոցական հիմնարկ, նրանց միջեւ ընթանում է յուրահատուկ մրցույթ՝ ամեն ինչում առաջինը լինելու մղումով: Ի վերջո, որեւէ տեղ չգրված օրենքով որոշվում է հաղթող այդ հաստատությունը, եւ հանրությունը նրան անվանակոչում է: Երկար տարիներ, քանի դեռ մանկապարտեզը չէր անվանակոչվել սպարապետ Վազգեն Սարգսյանի անունով, անվանվում էր այսպես՝ ընկեր Սաիդայի մանկապարտեզ: Սա Սաիդա Ադունցի աշխատանքի յուրահատուկ գնահատականն է: Երկարամյա տնօրենը դրան հասել է համառ, քրտնաջան աշխատանքի շնորհիվ: Այդ տարիներին շատ հարցեր են լուծվել, դրանցից շատերն էլ, թող բառախաղի տպավորություն չթողնի՝ շատ դժվարությամբ: Եվ այսօր Գորիսում ունենք «նախակրթարան» ականջահաճո բառով բնութագրվող մանկական հաստատություն, որն արդեն 25 տարի է ղեկավարում է ընկեր Սաիդան:

Միջոցառման ժամանակ հյուրերի մեջ օտարերկրացիներ նկատեցինք: Ֆրանսիայից էին՝ Գորիսի քույր քաղաք Վիենից: Պարզվեց, որ եկել են քաղաքապետարանի հրավերով՝ Վիեն-Գորիս համագործակցության շրջանակներում: Առաքելության նպատակն է ֆրանսերենի ուսուցման կազմակերպումը Վ.Սարգսյանի անվան նախակրթարանում: Համոզված ենք, որ այն հաջողությամբ կպսակվի, մանավանդ որ դրա փորձը կա. քաղաքի թիվ 5 նախակրթարանում (տնօրեն՝ Կարինե Մինասյան) 5-րդ տարին է՝ հաջողությամբ իրականացվում է:

Շատերն են լսել ճապոն ազգի ֆենոմենի մասին, բայց քչերը գիտեն, որ ծագող արեւի երկրի մարդկանց այդ գաղտնիքը բոլորովին էլ աստվածատուր չէ, այլ ձեռքբերովի, այն ամենօրյա քրտնաթոր աշխատանքի արդյունք է: Այդ աշխատանքը նրանք սկսում են մարդ արարածի ծննդյան հենց առաջին օրից: Մանկավարժության մեջ հայտնի արտահայտություն կա՝ եթե երեխայի դաստիարակությունը սկսում ես նրա քառասուն օրը լրանալուց հետո, նշանակում է այդ գործը ուշացրել ես հենց այդ-

քան օրով:

Իսկ ճապոնացին իր մանկան դաստիարակությունը սկսում է հենց նրա ծննդյան առաջին օրից: Երեք տարեկանից նրանց երեխաները պարտավոր են եւ կարողանում են ինքնուրույն հոգալ իրենց շատ հոգսեր՝ ոչ միայն ինքնուրույն ուտել ու խմել, խաղալուց հետո խաղալիքները հավաքել ու տեղավորել, այլ հարկ եղած դեպքում փոքրիկ ուսապարկի մեջ տեղավորել անհրաժեշտ բոլոր իրերն ու առարկաները: Ահա հենց այդ սովորույթների հիմքերն են դրվում այս մանկապարտեզում:

Թող տպավորություն չստեղծվի, թե ամեն ինչ հեշտ ու հարթ է ընթանում այստեղ: Նախակրթարանին հրաժեշտ է տալիս 79 փոքրիկ, ծանրաբեռնվածության պատճառով կրտսեր խումբ կարող է ընդունվել ընդամենը 40 երեխա, բայց այսօր արդեն դիմողների թիվն անցնում է 120-ից: Ի՞նչ սկզբունքով պետք է ընտրություն կատարվի: Ինչպիսին էլ լինի այն՝ դժգոհողներ անպայման լինելու են, որովհետեւ դիմումների մեծ մասը պետք է մերժվի, տեղ չկա:

Մտովի այցելենք մարզի համայնքները: Մանկապարտեզի տասնյակ տիպային շենքեր դատարկ են կամ էլ ծառայում են բոլորովին այլ նպատակի, որովհետեւ երեխա չկա, իսկ մարզի ամենահին նախակրթարանը տեղավորված է հարմարեցված շենքում:

> *Արդեն սովորույթ է դարձել, որ ամեն լավ գործ մենք թողնում ենք ապագային, այնինչ մեր մտքերը պետք է ապագայում լինեն, եւ այն էլ՝ հեռու ապագայում, իսկ գործը պետք է անենք այսօր, եթե ցանկանում ենք, որ այդ ապագան նման չլինի այսօրվան:*

Նախկին մանկապարտեզների հիմնական նպատակը երեխաների խնամքն էր: Այսօր առաջին պլան է մղվել երեխայի դաստիարակությունը եւ դպրոցական կյանքին նրան նախապատրաստելը: Մանուկների դաստիարակության այս մեթոդը վաղուց է կիրառվում սփյուռքի հայ գաղութներում: Համոզված ենք, որ հետայսու նախագծվող եւ կառուցվող դպրոցական շենքերը լինելու են կյանքի թելադրած այս պահանջներին համահունչ, հակառակ դեպքում «նախակրթարան» գեղեցիկ բառը կիմաստազրկվի:

Վերադառնանք մեր հանդեսին: Անվանակոչությունից հետո զինվորականները դարձել են նախակրթարանի իսկական բարեկամները: Այս անգամ նրանց պատվիրակությունը ղեկավարում էր զորամիավորման հրամանատարի տեղակալ, գնդապետ Թումանյանը, ով իր ելույթի վերջում հրապարակեց զորամիավորման հրամանատար, գնդապետ Տ.Փարվանյանի հրամանը՝ ընկեր Սահդային շնորհակալագրով պարգեւատրելու մասին:

Ելույթ ունեցավ մանկապարտեզի նախկին վարիչ Զոյա Շեգունցը:

Հանդիսությունն իրենց մասնակցությամբ պատվել էին եւ սրտառուչ խոսք ասացին Գորիսի քաղաքապետ Վաչագան Ադունցը եւ փոխմարզպետ Վարդան Դավթյանը: Քաղաքապետարանի կողմից նախակրթարանի կոլեկտիվը պարգեւատրվեց շնորհակալագրով:

Հանդեսն ավարտվեց տոնական հրավառությամբ, որի գույները մինչեւ իրենց երկար եւ, անկասկած, երջանիկ կյանքի վերջը երբեք չեն մոռանա նախակրթարանի փոքրիկ շրջանավարտները:

**ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# Արծվանիկն ունեցավ իր հավատի տաճարը

**Կապանի տարածաշրջանի Արծվանիկ գյուղի կենտրոնի Սուրբ Աստվածածին եկեղեցին 1855 թվականին է կառուցվել: 1930-ական թվականներին այն վերածվել էր պահեստի, բարեբախտաբար կանգուն մնաց եւ փոքրիշատե պահպանվեց, բայց չուներ գմբեթ ու զանգակատուն: Արծվանիկցին վաղուց էր ցանկանում իր հավատի տաճարը վերաշինված տեսնել: Վաղեմի ցանկությունն իրականություն է դարձել համայնքի նախանձախնդիր մարդկանց շնորհիվ: Ով նյութապես, ով բազկի ուժով օգնեց երկրորդ կյանք պարգեւելու եկեղեցուն: Ոչ միայն ամրացվեց կառույցը, դրան ավելացավ զանգակատունը, այլեւ բարեկարգվեց շրջապատը:**

Հուլիսի 5-ին տեղի ունեցավ վերաշինված եկեղեցու վերաօծման արարողություն, որ կատարեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Հովհան եպիսկոպոս Հակոբյանը: Վերաօծման արարողությանը մասնակցում էին Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, Կապանի, Գորիսի, Մեղրու հոգեւոր հովիվները: Գյուղի համար հիշարժան իրադարձությանն իրենց մասնակցությունն էին բերել Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, առաջին բանակային զորամիավորման հրամանատար, գնդապետ Տիգրան Փարվանյանը, ՀՀ ոստիկանության մարզային վարչության պետ Վախթանգ Ավագյանը, այլ պաշտոնատար անձինք:

Եկեղեցու վերաօծման արարողությունից հետո «Սյունյաց երկիրը» Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահից հետաքրքվեց, թե արդյոք սուրբ Աստվածածին եկեղեցին կունենա հոգեւոր սպասավոր, ինչին նա պատասխանեց, որ Հայոց եկեղեցին ունի բազում հոգեւորականների պակաս, ինչը պիտի լրացվի ժամանակի ընթացքում:

**«Ցավոք, Կապանի տարածաշրջանում ունենք մեկ, մինչդեռ պիտի լիներ չորս-հինգ հոգեւոր հովիվ, վստահ եմ, որ Սյունիքից կլինեն ցանկացողներ, ովքեր կուսանեն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, կձեռնադրվեն հոգեւորականներ եւ կվերադառնան Սյունիք: Հուսով եմ, որ այդ օրը կգա եւ կտեսնենք»,** - եզրափակեց տեր Մակար վարդապետ Հակոբյանը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

# Թող ինչի զանգն ի լուր

**Վերին Հանդի Սուրբ Աստվածածին եկեղեցին 2008-2009 թվականներին վերակառուցվել էր եւ դռները բացել Քաջարանի տարածաշրջանի հավատացյալների առջեւ: Բայց հավատի տաճարը տակավին զանգ չուներ: Այդ բացը լրացվեց եկեղեցու խաչի քավոր, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության շինարարական արտադրամասի տնօրեն Արմեն Ոսկանյանի նախաձեռնությամբ:**

Հուլիսի 2-ին տեղի ունեցավ եկեղեցու խաչի ու զանգի օրհնման եւ օծման արարողություն, որ կատարեց Հայ առաքելական եկեղեցու Եգիպտոսի թեմի առաջնորդ, գերաշնորհ տեր Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը՝ մասնակցությամբ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հայր Մակար վարդապետ Հակոբյանի եւ Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանի:

Ծիսական արարողությունից հետո խնդրեցինք օրվա խորհուրդը մեկնաբանել հայր Մակար վարդապետ Հակոբյանին. **«Յուրաքանչյուր իր կամ առարկա, որ գոյություն ունի եկեղեցուց ներս, պիտի օրհնվի եւ օծվի:**

**Այսօր Սուրբ Աստվածածին եկեղեցու վրա տեղադրվեց զանգ, եւ ինչպես ընդունված է, կատարվեց օրհնության եւ օծման կարգ: Խաչը մեր տիրոջ նշանն է, մեր բոլորի փրկության գրավականը: Իսկ կոչնակը, որ մտել է եկեղեցու մեջ, սկզբից փայտից է եղել, հետագայում ներմուծվել են նաեւ մետաղական զանգեր, որ օգտագործվում են եկեղեցիների զանգակատներում: Զանգի խորհուրդը հետեւյալն է. երբ ջրհեղեղ եղավ, Աստված Նոյ նահապետին պատվիրեց, որ երկու տախտակ վերցնի եւ հարվածի, որ բոլոր կենդանիները հավաքվեն տապանից ներս եւ փրկվեն: Եկեղեցիները նոյյան տապանի տեսքով են կառուցված, երբ զանգը հնչում է, դա խորհրդանշում է, որ մարդիկ աշխարհիկ մեղքերից պիտի հեռանան եւ մտնեն եկեղեցվո տապանի մեջ՝ աղոթելով, պատարագների մասնակցելով՝ արժանանալով հավիտենական կյանքի»:**

Երբ ամեն ինչ ավարտվել էր, եկեղեցու բակում Եգիպտոսի հայ թեմի առաջնորդ գերաշնորհ տեր Աշոտ եպիսկոպոս Մնացականյանը զրույց ունեցավ քաջարանցիների հետ, հակիրճ ներկայացրեց Եգիպտոսի հայ համայնքները, նրանցում առկա հավատի տաճարները, այլ դավանանք ունեցող եկեղեցիները եւ նրանց ուսմունքների տարբերությունը Հայ առաքելական եկեղեցուց:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

ԼՈՒՍԱՆԿԱՐԸ՝ Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

# Վերականգնվում է Մեղրու Անապասպանաց վանքը

**«Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպությունը սկսել է Մեղրու Սուրբ Հովհաննես եկեղեցու կամ, ինչպես մեղրեցիներն են անվանում, Անապաստանաց վանքի վերականգնման աշխատանքը:**

Ըստ կազմակերպության տնօրենների խորհրդի անդամ, հայաստանյան ծրագրերի պատասխանատու, վերականգնող ճարտարապետ Ստեփան Նալբանդյանի՝ 2016 թվականին նախատեսված է կատարելու գիտահետազոտական եւ նախնական աշխատանքներ՝ չափագրություն, նախագծում, պեղումներ, երկրաբանական ուսումնասիրություններ, պատերի սեյսմակայունության ուսումնասիրում: Զուգահեռաբար կիրականացվեն ժամանակավոր ամրակայման աշխատանքներ: Իսկ բուն շինարարությունը կիրականացվի 2017-ին:

Ենթադրվում է, որ աշխատանքները կտեւեն մոտ երեք տարի:

Ծրագիրն իրականացվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

Հնագիտական աշխատանքները ղեկավարում են ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտաշխատողներ Հարություն Բաղալյանը եւ Արման Նալբանդյանը: Աշխատանքներին (ամռան ամիսներին) մասնակցում են նաեւ կամավորներ Սփյուռքից եւ Հայաստանի տարբեր բնակավայրերից:

Եկեղեցու վերականգնման աշխատանքները կատարվում են «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության բարերարների, մասնավորապես Հայկ եւ Հիլդա Մանջիկյանների ներդրմամբ (ԱՄՆ). արդեն իսկ նրանք այդ նպատակով նվիրել են 250 հազար դոլար:

Հիշեցնենք նաեւ՝ եկեղեցին 13-րդ դարի կառույց է՝ վերաշինված 17-րդ դարում:

**Նաիրա Հայրապետյան**

# Ո՞վ է մեղավոր Անգեղակոթի Սուրբ Վարդան Ջորավոր սրբավայրում սպեղծված անմխիթար վիճակի համար

էջ 1

պակասել եւ վերացել է վերջին մի քանի տասնամյակում, իր հազարամյակների պաշտամունքային դերը պահպանել էր մինչեւ վերջերս՝ ամեն տարի՝ Վարդավառի տոնին:

Թերեւս բավականին հետաքրքիր այդ սրբատեղին այսօր էլ զարմացնում է իր դիրքով, բայց առավել շատ զարմացնում եւ հիասթափեցնում է նրա անմխիթար վիճակը: Վերջերս կատարած այցելության ժամանակ մեր առջեւ բացված տեսարանը, կարծում ենք, անպատվաբեր է յուրաքանչյուրիս համար: Տանիքի անմխիթար վիճակ, թեքված գերան, բազում գունաթափված լուսանկարներ՝ ցաքուցրիվ կախված, պատերին վառված մոմի մնացորդներ, անգործության մատնված ավել, մեկանգամյա օգտագործման համար նախատեսված բաժակներ, եւ այս շարքը կարելի է շարունակել, բայց, կարծում ենք, այսքանն էլ բավական է պատկերն ամբողջական դարձնելու համար:

Ակամայից մի հարց առաջացավ. ո՞վ է մեղավոր նման հուսահատեցնող վիճակի համար, երբ անընդհատ խոսում ենք մեր ազգի՝ պատմական սրբավայրերը պահպանելու «արժանիքների» մասին՝ փոխարենը փնովելով հարեւան ադրբեջանցիներին: Մի՞թե սա նույնպես հուշարձանի հանդեպ բարբարոսական վերաբերմունք ունենալու հերթական դրսեւորումը չէ մի այնպիսի սրբավայրի հանդեպ, որը դարեր շարունակ պահպանում է իր ուժը, զորությունը մարդկանց շրջանում: Միգուցե պատկան մարմինները զանազան պատճառաբանություններ ներկայացնեն, բայց մի բան ակնհայտ է. բոլորս ենք մեղավոր՝ յուրաքանչյուրս մեր իրավասության շրջանակներում:

*«Պատմամշակութային արգելոց-թանգարաններ եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ Սյունիքի մարզային ծառայության պետ Աստղիկ Հակոբյանը մեզ հետ ունեցած հեռախոսազրույցում նշեց, որ Սուրբ Վարդան Ջորավոր սրբատեղին ներառված է առավել վտանգված հուշարձանների ցանկում, եւ հնարավորության դեպքում կվերանորոգվի: «Կան բարերարներ, ովքեր հետաքրքրված են հուշարձանի ճակատագրով, եւ առաջիկայում՝ համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթեր ներկայացնելուց հետո, տանիքը կփոխվի, որը, իհարկե, վերանորոգում չէ, այլ ժամանակավոր միջոցառում հուշարձանը հետագա ավերումից փրկելու համար»,* – նշեց ծառայության պետը:

Մեր այն դիտարկմանը, որ միգուցե մաքրման աշխատանքներ կատարվեն՝ պատերից հեռացնելով մոմերի մնացորդները, խուսնացած լուսանկարները հավաքելով, Աստղիկ Հակոբյանը նշեց, որ հատկապես Վարդավառի տոնին բազում ուխտավորներ է ունենում սրբատեղին: *«Եթե հուշարձանը մշտական վերահսկող չունի, հնարավոր չէ մարդկանց արգելել այնտեղ մոմ վառել»,* – պարզաբանեց Ա.Հակոբյանը:

Ինչ վերաբերում է այցելուների անվտանգությանը կամ առավել եւս նրանց մուտքը սրբատեղի արգելելուն՝ անվտանգության կանոններից ելնելով, ապա ծառայության պետը նշեց, որ տանիքի նորոգմամբ ժամանակավոր լուծում կտրվի անվտանգության հարցին, իսկ ամբողջական վերանորոգման համար, ինչպես արդեն նշեցինք, դեռեւս համապատասխան միջոցներ չկան:

Ինչպես այս սրբատեղիում նկատեցինք, այնպես էլ Որոտնավանքում մուտքի վահանակին գրված էր, որ հուշարձանը պահպանում է Հայկական ԽՍՀ կուլտուրայի մինիստրությունը… մեկնաբանությունը թողնում ենք ընթերցողին: Իսկ Աստղիկ Հակոբյանը մեր այդ նկատառմանն այսպես պատասխանեց. *«Ո՞ւմ է խանգարում այդ վահանակը, ամեն ինչ հանել-շպրտելով չէ: Այցելողը չգիտի՞, որ այն տարիներին ներկայիս մշակույթի նախարարությունն այդպես էր կոչվում: Եթե պետությունը կունենա նոր վահանակներ դնելու հնարավորություն, այդ դեպքում հինը թող հանեն, իսկ եթե նորը դեռ չկա, ո՞ւմ է խանգարում հինը»:*

Անգեղակոթի համայնքի ղեկավար Արմեն Խաչատրյանից նույնպես փորձեցինք սրբատեղիի վիճակի մասին բացատրություններ ստանալ: Ինչպես տեղեկացանք, համայնքի ղեկավարը միայն աջակցում է համայնքի տարածքում գտնվող պատմամշակութային հուշարձանների պահպանությանը եւ իրավասու չէ այնտեղ որեւէ գործողություն իրականացնել: *«Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանից օրերս ստացա պատասխան նամակ, որտեղ նա նշել էր, որ ողջունում է մեր նախաձեռնությունը տանիքի նորոգման հարցում, բայց դրա համար պետք է պատրաստվեն նախագծանախահաշվային համապատասխան փաստաթղթեր: Բայց, իմ կարծիքով, այդ գործընթացը բավականին ժամանակ կխլի, բացի դրանից՝ դեռեւս հարց է՝ իմ ուղարկած փաստաթղթերը կընդունե՞ն, թե՞ ոչ: Նախկինում փորձել եմ այնտեղ որոշակի բարեկարգման աշխատանքներ կատարել, բայց չորս անգամ քրեական գործ են հարուցել իմ դեմ համապատասխան մարմինները՝ պատճառաբանելով, որ ես իրավասու չեմ այնտեղ մեկ քար անգամ ավելացնել կամ պակասեցնել: Ամիսներ, տարիներ են պահանջվում, մինչեւ այդ դատական գործերը փակվում են»,* – նշեց համայնքապետը եւ հավելեց, որ հատկապես վերջին մի քանի ամիսների ձնհալից եւ առատ անձրեւներից էլ ավելի է վատթարացել վիճակը:

*«Եթե համապատասխան մարմինները խոստանան, որ աչք կփակեն մեր քայլերի վրա, տանիքը կփոխեմ: Մենք ավանդապաշտ ժողովուրդ ենք, եւ ես գործ չունեմ մարդկանց դրած լուսանկարները վերցնել, թող պատկան մարմինները կատարեն այդ աշխատանքը: Որպես համայնքի ղեկավար՝ պատմական հուշարձանները պահպանելու որոշակի պարտականություններ ունեմ, բայց երբ մի քայլ եմ անում, իրենք դա հաշվի չեն առնում եւ սկսում են ինձ հետ օրենքի լեզվով խոսել»,* – վրդովված նշեց Արմեն Խաչատրյանը:

Մեզ մնում է հավատալ, որ շուտով այս խնդրին համապատասխան լուծում կտրվի, եւ լիազոր մարմինները շուտափույթ քայլեր կձեռնարկեն ուխտատեղին կարգի բերելու համար:

Ի դեպ, սրբատեղիի դռան համար որպես փական ծառայում է պոլիէթիլենե տոպրակը… Կարծում ենք՝ կան մանրուքներ, որոնք աննշան, բայց աչքի ընկնող փաստեր են եւ որոնց վերացման համար ամենեւին էլ բարձրագույն ղեկավար մարմինների թույլտվությունն անհրաժեշտ չէ…

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Քննարկում խնամատար ընտանիքի կայացման վերաբերյալ

**Հունիսի 15-ին Կապանի քաղաքապետարանում տեղի ունեցավ հանդիպում «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության եւ ներառական կրթական ծառայությունների ընդլայնում» (2014-19թթ.) ծրագրի քննարկման նպատակով: ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության կողմից ֆինանսավորվող եւ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) կողմից համաֆինանսավորվող այս ծրագրի նպատակն է՝ երեխայի խնամքի համակարգի ընթացիկ բարեփոխումների շրջանակներում աջակցել ՀՀ կառավարությանը՝ երեխայի ընտանեկան միջավայրում ապրելու իրավունքն ու համայնքահեն սոցիալական եւ կրթական ծառայությունների մատչելիությունն ապահովելու գործում:**

Ծրագրի պատասխանատուները բավականին մանրամասն ներկայացրին ծրագրի նպատակը, փուլերը, որոշ մարզերում ունեցած փորձի արդյունքները եւ այլն, իսկ հանդիպմանը մասնակից շահագրգիռ անձինք ստացան իրենց հուզող հարցերի պատասխանները:

Այսօր Հայաստանի երեխայի խնամքի եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ներառյալ հատուկ դպրոցներում, ապրում է մոտ 3500 երեխա: Այս իրավիճակը ստեղծվել է սոցիալական պաշտպանության թույլ համակարգի, համայնքահեն ծառայությունների ոչ բավարար թվի եւ վերահսկման մեխանիզմների պակասի հետեւանքով:

*«Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ծրագրի ընտրված մարզերի (Սյունիք, Լոռի, Արարատ, Արմավիր) եւ Երեւանի՝ երեխայի խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատությունների առնվազն 50 տոկոսը վերակազմակերպել ընտանիքի աջակցության բազմաֆունկցիոնալ կենտրոնների: Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է, որ ընտրված մարզերի խնամք եւ պաշտպանություն իրականացնող հաստատություններում, ներառյալ՝ հատուկ դպրոցներում գտնվող երեխաները վերամիավորվեն իրենց ընտանիքների հետ: Կենսաբանական ընտանիքների բացակայության կամ այն դեպքերում, երբ կենսաբանական ընտանիքի հետ երեխայի վերամիավորումը հնարավոր չէ, նրանց հնարավորություն կընձեռվի ապրելու այլընտրանքային, այն է՝ խնամատար ընտանիքներում: Վերակազմակերպված հատուկ դպրոցների երեխաները կայցելեն հանրակրթական կամ ներառական դպրոցներ եւ խոցելի խմբի այլ երեխաների հետ միասին կօգտվեն համայնքահեն այլընտրանքային ծառայություններից»,* - նշեց Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գործադիր տնօրեն Միրա Անտոնյանը:

Նշված համագործակցության շրջանակներում ընդհանուր առանցքային մոտեցումն ընտանեկան միջավայրում ապրելու երեխայի իրավունքն է՝ կանխելով նոր երեխաների ներհոսքը խնամքի եւ պաշտպանության հաստատություններ եւ միաժամանակ խոշոր հաստատություններից աստիճանաբար դուրս բերելով դրանցում խնամվող երեխաներին՝ սոցիալական դեպք վարողների մասնագիտական աջակցության եւ ընտանիքներին սոցիալական աջակցության փաթեթի տրամադրման միջոցով, ինչը բխում է երեխայի լավագույն շահի սկզբունքից:

Բացի ՅՈՒՆԻՍԵՖ-ից, որ ծրագիրը համակարգող կառույցն է, ծրագրի համակարգողներն են՝ «Սեյվ դը չիլդրեն»-ը, «Վորլդ վիժն Հայաստան»-ը, «Հույսի կամուրջ» հկ-ն եւ Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամը: Ծրագրի շրջանակներում գործընկերները համագործակցում են ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի, կրթության եւ գիտության, տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունների հետ:

ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող ծրագիրը ներկայացրեց ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հասմիկ Առաքելյանը՝ առանձնացնելով նաեւ գործընկեր կազմակերպությունների գործառույթներն այս ծրագրի շրջանակներում, քննարկման կարեւորությանն անդրադարձավ համայնքային զարգացման ծրագրի տնօրեն Հայաստան Ստեփանյանը, խնամատարության հայեցակարգի վերաբերյալ խոսեց «Սեյվ դը չիլդրընն» կազմակերպության ներկայացուցիչ Ամալյա Ոսկանյանը, իսկ գլխավոր բանախոսը Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի գլխավոր տնօրեն Միրա Անտոնյանն էր:

Խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային այլ ընտանիքում խնամք եւ դաստիարակություն տալն է: Խնամատար ընտանիքն իրավասու մարմինների կողմից ընտրվում, հաշվառվում, վերապատրաստվում եւ որակավորվում է՝ որոշակի ժամկետով ստանձնելով երեխայի խնամքը եւ դաստիարակությունը մինչեւ երեխայի կենսաբանական ընտանիքի հետ վերամիավորումը կամ խնամատարության կիրառման հիմք հանդիսացող վիճակի փոփոխումը:

Խնամատարության կարեւոր առանձնահատկությունն այն է, որ խնամատար ծնողները չեն ընտրում երեխային, այլ երեխայի համար են ընտրվում հարմար ծնողներ: Անշուշտ, խնամատար ծնողները նախապես ծանոթանում են խնամատարության հանձնվող երեխաների պատմությանը, նրանց խնդիրներին, տեղեկանում նրա եւ նրա ընտանիքի կյանքին վերաբերող բոլոր կարեւոր հանգամանքներին մինչեւ երեխայի ընդունումն ընտանիք:

Եվ քանի որ խնամատարությունը մասնագիտական աշխատանք է, հետեւաբար վճարվում է՝ մոտավորապես կազմելով ամսական 130-140 հազար դրամ՝ հաշվի առնելով երեխայի տարիքը, առողջական վիճակը եւ այլն: Բնականաբար, գումարը պետք է ծախսվի երեխայի կարիքները հոգալու համար:

Ակնհայտ է, որ ծրագրի նպատակը մարդասիրական է, եւ հուսանք, որ աստիճանաբար կավելանան այն ընտանիքները, ովքեր պատրաստ կլինեն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային տալ ընտանեկան ջերմություն: Ի դեպ, բանախոսներն անընդհատ շեշտում էին այն միտքը, որ ծրագրի նպատակը խնամքի կենտրոնների, հատուկ ուսումնական հաստատությունների, գիշերօթիկ դպրոցների վերացումը չէ, այլ՝ երեխային ընտանիքում պահելը:

**ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Կաթի մթերման կետը՝ ֆերմերային տնտեսությունների հիմք

**Մայրաքաղաքից մոտ երկու հարյուր կիլոմետր արեւելք՝ Սյունիքի մարզի Հարժիս համայնքում, 2011 թվականից գործող միակ կաթի մթերման կետը Սեդրակ Հակոբյանի համար բիզնես նախագիծ չէ, այլ համագյուղացիներին արտագաղթից հետ պահելու միջոց:**

«Ամեն ինչ սկսվեց 2010 թվականին, երբ մարդիկ արդեն լրիվ հիասթափված էին, անասուն չէին ուզում պահել, գյուղում մի 200 գլուխ կով էր մնացել»,- պատմում է կաթի մթերման կետի հիմնադիր Սեդրակ Հակոբյանը: Նրա խոսքով՝ կենդանիներ պահելու որեւէ ցանկություն գյուղացիների մոտ չկար, քանի որ համայնքը գտնվում է մայրաքաղաքից եւ խոշոր շուկաներից հեռու եւ, բնականաբար, գոյություն ուներ մթերքի իրացման խնդիր:

– 2010 թվականին արդեն ամեն ինչ պատրաստ էր, սառնարանը դրված, բայց մի լիտր կաթ չենք կարողացել մթերել, կաթ չի եղել, մարդիկ ավելցուկ չեն ունեցել հանձնելու, - հիշում է Սեդրակը: 2011 թվականի մարտ-ապրիլ ամիսներին Ռազմավարական զարգացման գործակալության միջնորդությամբ մոտ 32 ֆերմեր զեղչով անասուն ձեռք բերեց Տաշիրից, Ստեփանավանից: Հետո արդեն սկսեցին վարկ վերցնել, կովեր առան, շատացրին, որ մի բան երեւա: Այսպես, զրոյից մենք ֆերմերային տնտեսություններ ենք ստեղծել, լրիվ զրոյից:

Ռիսկերի ու դժվարությունների մասին Սեդրակը չի մտածել: «Եթե գյուղում ծնվել, մեծացել ես, հասկանում ես, որ ռիսկ ամեն ինչի մեջ էլ կա»,- ժպտալով ասում է նա: Մտածել է, որ նման լեռնային գյուղում մարդկանց հիմնական զբաղմունքն անասնապահությունն է, ուստի պետք է այդ զբաղմունքը եկամտաբեր դարձնել, այլապես գյուղը կդատարկվի, երիտասարդ չի մնա: «Էստեղ ո՛չ այգիներ կան, ո՛չ արտադրություն, ո՛չ գործարան: Ինչ պիտի անեն, պիտի թողնեն-գնան Ռուսաստան կամ ուրիշ տեղ, ընտանիքն էլ տանեն», – ասում է Սեդրակը:

Երբ խնդրում եմ խոսել բիզնեսի դժվարությունների մասին, նեղսրտում է: «Ես սա որպես բիզնես չեմ ընկալում. սա ծրագիր է, որը պետք է անել ի շահ ժողովրդի: Ես չեմ մտածել, որ սրանից պետք է եկամուտ ստանամ»,- ասում է նա՝ հավելելով, որ առաջին տարին աշխատել է վնասով:

Երիտասարդ գործարարի համար ամենակարեւորն ազնվությունն է, մարդկանց վստահությունն արդարացնելը: Պատմում է, որ ձմռան ամիսներին սովորաբար մթերումների ծավալը կրճատվում է, եւ բիզնեսի տեսանկյունից աշխատելը եկամտաբեր չի դառնում: Բայցեւայնպես շարունակում են աշխատել, քանի որ մարդիկ պետք է վստահ լինեն, որ եթե անգամ 1 լիտր ավելցուկ կաթ ունեն, անկախ տարվա եղանակից, կարող են իրացնել:

Այս պահին Սեդրակը համագործակցում է 60 ֆերմերի հետ, օրական մթերում շուրջ 2 տոննա կաթ: Խոսելով ապագայից՝ երազում է, որ մի օր կկարողանա տեղում վերամշակել մթերված կաթը, բայց առայժմ վաղ է դրա մասին խոսել. մեծ ֆինանսների հետ է կապված:

> *Ապագային մեծ հույսով է նայում: Ոչնչից չի բողոքում, ոչ մի բանից չի տրտնջում: Միակ կռիվը ժամանակի հետ է: «Բողոքում եմ, որ ժամանակը չի հերիքում, որ աշխատող մարդուն հնարավորություն չկա լավ աշխատելու: Ես չեմ ասում՝ մեկն աշխատի իմ փոխարեն, կամ աշխատածը բերի ինձ տա: Մեզ հնարավորություն տան աշխատելու՝ ամեն ինչ կանենք»,- եզրափակում է Սեդրակ Հակոբյանը:*

Հարժիս համայնքում կաթի մթերման կետը հիմնվել է «Անասնապահության զարգացում Սյունիքի մարզում» ծրագրի շրջանակում, որն իրականացվում է Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեյցարիայի զարգացման եւ համագործակցության գրասենյակի (ՇԶՀԳ) ֆինանսավորմամբ: 2011-2016թթ. ընթացքում, շնորհիվ կաթի մթերման կետի, համայնքում խոշոր եղջերավոր կենդանիների գլխաքանակը գրեթե կրկնապատկվել է:

**Ռազմավարական զարգացման գործակալություն (ՌԶԳ) հկ**

# Երբ դեռ երկրային կյանքին հրաժեշտ չէր տվել Հասմիկ տատը

Ես Սոսեն եմ, ապրում եմ Դարբաս գյուղում, եւ մեր գյուղի հարեւանությամբ է գտնվում Լոր գյուղը՝ Համո Սահյանի ծննդավայրը: Դարբասում է ապրում նրա քույրը՝ Հասմիկ տատը:

Ամեն անգամ, երբ տոնում ենք Սահյանի ծննդյան օրը, նա այցելում է մեզ եւ լուռ լսում, թե ինչպես ենք ասմունքում: Հետո միշտ կարծիք է հայտնում մեր կազմակերպած միջոցառման մասին՝ անպայման համեմատության մեջ դնելով նախորդ տարիների գրական ցերեկույթները: Պարզվում է՝ Սահյանի շատ ստեղծագործությունների առաջին ունկնդիրը նա է եղել: Քույրական սիրո՞վ, թե՞ խստապահանջ ընթերցողի գնահատմամբ միշտ գովերգել է եղբորը՝ քարափների անմահ երգչին, ով հայերին, ինչու չէ՝ նաեւ աշխարհին, քարտեզի վրա փնտրել տվեց Լորը՝ ծորերի մեջ մոլորված բնակավայրը:

...Խաչի պապի օջախում կերած իրիկնահացը պիտի դառնար շատ հայերի օջախի օրհներգը, պապի արծանը պիտի դրվեր Դարբաս գյուղի եկեղեցու բակում, եկեղեցին ու պապը պիտի դառնային 21-րդ դարի այս նահապետական գյուղերի խորհրդանիշները, ինչսուանամյա Հասմիկ տատը պիտի դառնար համով-հոտով զրույցների, սահյանական հյուրընկալումների եւ նշանավոր իրադարձությունների վկան ու ասացողը: Այդպես էլ եղավ...

Այնպիսի ճոխ բառապաշարով ու դիմախաղով է պատմում հավերժ երիտասարդ տատը, որ անկարող ես չլսել նրան: Նա գյուղական հիվանդանոցի մանկաբարձուհին է եղել, գիտի բոլոր գյուղացիների ծննդյան տարեթվերը, ամիս-ամսաթվերը: Ապրում է գյուղով, գյուղի մարդկանցով, կիսում նրանց հոգսերն ու ապրումները: Մեծի հետ մեծ է, փոքրի հետ՝ փոքր: Բոլորը սիրում ու հարգում են նրան. գյուղական միջոցառումների բացումն ու փակումը վերապահում են նրան՝ տարիների վաստակն ուսերին ճերմակահեր պատվարժան տիկնոջը, ում անունն իմ գյուղի տարեգրության մեջ ոսկե տառերով կգրվի:

Մայրիկս մի բանաստեղծություն է ձոնել նրան, որ ներկայացնում եմ ստորեւ:

*Ու հիմա էլ այս ձորերում քույրն է ապրում մեծ պոետի,*
*Թե եղբայրը տրաղ է երկնել, նա մայրական մեծ երկունքի*
*Ավետիսն է ու լուռ վկան,*
*Ու իր ճերմակ վարսերի չափ աչքալուսանք ունի հայտնած՝*
*Մի լավ տղա, նախշուն աղջիկ:*
*Մեծարանքի ու հարգանքի նա էլ բաժին ունի հասարար.*
*Չէ՞ որ դուստրն է Խաչի պապի, սիրված քույրը՝ մեծ պոետի:*

**ՍՈՍԵ ՋԱԲԱՐՅԱՆ**

## 12 հուլիսի 2016թ., Մեղրի

Մեղրու տարածաշրջանում ամառային զորակոչի առաջին հավաքն էր, որը, ավանդույթի համաձայն, անցկացվեց բազմաթիվ մեղրեցիների մասնակցությամբ եւ հանդիսավորությամբ ու տոնական մթնոլորտում:

Հայոց ազգային բանակ մեկնող 16 մեղրեցի երիտասարդի ողջերթի խոսք հղեցին Մեղրու քաղաքապետ Արշավիր Հովհաննիսյանը եւ տարածաշրջանի զինկոմ Դավիթ Անանյանը:

Նորակոչիկների անունից խոսք ասաց Սասուն Մարտիրոսյանը (Շվանիձոր համայնքից):

Միջոցառմանը ներկա էր Քաջարանի հոգեւոր հովիվ տեր Շիրակ քահանա Խանոյանը, ով հանդես եկավ օրհնության խոսքով ու պահպանիչ աղոթքով:

Հանդիսավոր արարողությունն ավարտվեց Մեղրու մշակույթի կենտրոնի եւ գեղագիտության ազգային կենտրոնի մասնաճյուղի գեղարվեստական ինքնագործ խմբերի ելույթներով:

Բարի ծառայություն մեր տղաներին...

**ՍԻՐՈՒՆ ՍԱՐԳՍՅԱՆ**

# Մեղրու գյուղատնտեսական սպասարկման կենտրոնը բացեց դռները

էջ 3

*արդյունավետ գյուղատնտեսության իրականացումը: Նախարարությունը հետեւողական է լինելու այս հարցում, վստահ եմ, որ առաջիկայում ավելի արդյունավետ միջոցառումներ կիրականացվեն»,* – ասաց փոխնախարարը:

Կենտրոնի բացման առթիվ մեղրեցիներին շնորհավորեց գյուղատնտեսության փոխնախարար Արմեն Հարությունյանը՝ ներկաներին իրազեկելով, որ Մեղրու ագրոսպասարկման կենտրոնը 16-րդն է հանրապետությունում, եւ դրանց թիվը մինչեւ տարեվերջ կհասնի 30-ի: Նաեւ երախտագիտություն հայտնեց միջազգային կազմակերպություններին՝ նշելով, որ ինչպես ագրոսպասարկման կենտրոնների աշխարհագրությունն է հարուստ, այնպես էլ դրանց հիմնադրմանը նպաստած միջազգային կազմակերպությունների: Փոխնախարարը հաջողություն մաղթեց կենտրոնի հետագա աշխատանքներին:

Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը կենտրոնի հիմնումը միջազգային կազմակերպությունների եւ պետական կառույցների համագործակցության լավագույն օրինակ համարեց: *«Քանի որ Սյունիքի մարզպետարանը Հայաստանի ագրարային համալսարանի հետ հուշագիր է ստորագրել, այդ շրջանակում շատ կարեւորվում է, որ կենտրոնը կարող է ծառայել հարթակ՝ սեմինար պարապմունքների, գործնական որոշ հմտություններ ձեռք բերելու համար, խոսքս վերաբերում է ագրարային ազգային համալսարանի պոտենցիալ դիմորդներին»,* - ասաց մարզպետի տեղակալը:

«Մուլտի ագրո» գիտաարտադրական կենտրոն» ՍՊ ընկերության գլխավոր տնօրեն Ռոզա Ծառուկյանն իր խոսքում շնորհակալություն հայտնեց բոլոր այն կազմակերպություններին, որոնք հեռավոր Եվրոպայից Մեղրիում ներդրումներ են անում:

Մեղրու գյուղտնտեսական սպասարկման կենտրոնի բացման արարողությունից հետո հյուրերը ծանոթացան Լիլիթ Ավետիսյանի եւ Իշխան Ասլանյանի ընտանեկան բիզնեսին (չրերի արտադրամաս են հիմնել): Այցելեցին Ագարակի միջնակարգ դպրոց, որտեղ տարեսկզբին բացվել է ագրոտեխնոլոգիական հոսքային դասարան: Կրթօջախի տնօրեն Էռնա Բարխուդարյանը «Սյունյաց երկրին» հայտնեց, որ ագրարային ազգային համալսարանի եւ Սյունիքի մարզպետարանի միջեւ կնքված հուշագրի համաձայն 2018 թվականին այդ դասարանից չորս հոգի (երկուական Մեղրուց եւ Ագարակից) իրավունք կստանան գործուղումով սովորել ագրարային համալսարանում:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Հանդիպում 40 տարի անց

Մայիսի 29-ին՝ 40 տարի անց, կրկին հանդիպեցին Կապանի թիվ 1 դպրոցի 1975-76 ուստարվա 10 բ դասարանի շրջանավարտները: Հուզմունքը, ուրախության արցունքներն ու հաճելի հիշողությունները մեկտեղվել էին: Հանդիպման առաջին կանգառը Հունան Ավետիսյանի հուշարձանի մերձակայքն էր, որտեղից համադասարանցիները ճանապարհվեցին դեպի Բաղաբուրջի հուշահամալիր՝ ծաղիկներ դնելու զոհված ազատամարտիկների շիրիմներին:

Դասարանից 15 հոգի էր ներկայացել, մյուսները տարբեր պատճառներով ներկա չէին, բայց համոզված եմ՝ հոգով ու սրտով այդ օրը նրանք բոլորն էլ միասին էին: Այցելելով Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցի, որտեղ նախկինում գտնվել է Կապանի թիվ 1 դպրոցի շենքը՝ նրանք մոմեր վառեցին եւ իրենց աղոթքն ուղղեցին առ Աստված, որ պահապան լինի բոլորին:

Հանդիպմանը ներկա էին 88-ամյա դասղեկ Ազնիվ Դավթյանը եւ ուսուցիչներից Լենա Գաբրիելյանը, Նելլի Օրբելյանը, Ժորա Մնացականյանը եւ Վարյա Սուվարյանը: Իր այցով ներկաներին անակնկալի բերեց նաեւ 7-րդ դասարանում այդ դպրոցից տեղափոխված Վահագն Խաչատրյանը:

Հանդիպման վերջին կանգառը «Դղյակ» ռեստորանն էր, որտեղ սեղանների շուրջ դասընկերները շարունակեցին իրենց զրույցը, հետաքրքրվեցին մեկը մյուսի կյանքով, հոգսերով, իսկ իրենց անուններով տորթը կտրելիս երազանք պահեցին մշտապես միմյանց կողքին լինելու համար: Հրաժեշտի խորհուրդը կրկին հանդիպելու հույսն էր…

Այս հրաշալի միջոցառման հեղինակն էլլա Օրբելյանն էր, ով իր ուսերին էր վերցրել միջոցառումը կազմակերպելու պատասխանատու գործը:

**ՍՈՆՅԱ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

## Սպասված ու սիրելի դարձած փառատոն

**Մեկամյա ընդմիջումից հետո 11-րդ անգամ անցկացվեց գեղեցկության, հմայքի եւ ներդաշնակության «Միսս եւ Միստր-Կապան» մրցույթ-փառատոնը, որ անցնելով որոշակի ճանապարհ, հաստատապես լրացրել է մանկական միջոցառումների շարքը:**

Միջոցառումը սկսվեց Կապանի կենտրոնական հրապարակի շատրվաններից՝ շքերթով, որին մասնակցում էր նախկին մրցույթ-փառատոնի մոտ 40 երեխա: Մրցույթի մասնակիցներին հանդիսավոր դիմավորումից հետո ներկաները տեղափոխվեցին մշակույթի կենտրոնի մեծ դահլիճ:

Միջոցառմանը մասնակցում էին Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանը: Մրցույթ-փառատոնի «օրակարգն» անփոփոխ էր՝ դեֆիլե (գեղաքայլ), ազատ ոճ եւ դասական պար. այս անգամ մրցույթն անցկացվեց տարիքային երեք խմբով: Միջոցառմանն առանձին շուք էին հաղորդել բեմական ու երաժշտական պատշաճ ձեւավորումները, փոքրիկների հագուստ-կապուստը, դահլիճում տիրող անմիջական մթնոլորտը: Իսկ մրցանակների հանձնումն ու թագադրումն ուղեկցվեց տոնական հրավառությամբ, որը հրճվանք պատճառեց մանուկներին: Այս անգամ եւս շնորհվեց «Հանդիսատեսի համակրանք» մրցանակ:

Փառատոն-մրցույթի անցկացումը հնարավոր դարձավ հովանավորների շնորհիվ: «Միսս եւ միստր» մրցույթի միջազգային կազմկոմիտեի Սյունիքի մարզային կազմակերպիչ Նոնա Գալստյանը պատեհ առիթը բաց չթողեց երախտագիտություն հայտնել բոլոր նրանց՝ Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանին եւ մարզպետարանի աշխատակազմին, Կապանի քաղաքապետ Աշոտ Հայրապետյանին, «Գազպրոմ-Արմենիա» ՓԲԸ Սյունիքի գազիֆիկացման եւ գազամատակարարման մասնաճյուղի տնօրեն Արթուր Խաչատրյանին, Կապանի «Նորոգշին» ՍՊԸ տնօրեն Ռազմիկ Փարսյանին, «Պրինց» ռեստորանային համալիրին (տնօրեն՝ Էդգար Հակոբյան), Սյունիքի մարզպետի խորհրդական Վիկտորյա Դավթյանին՝ մանկական տոնի կայացմանն օժանդակելու համար: Հավուր պատշաճի գնահատվեց պարուսույց Էրիկ Քոչարյանի ավանդը

պարերի բեմականացման գործում, եւ մշակույթի պալատի տնօրենության՝ դահլիճը տրամադրելու պատրաստակամությունը:

Հուլիսի 18-ին մարզային մրցույթի երկու հաղթող Երեւանի «Վալենսիա» համալիրում մասնակցեց մրցույթի հանրապետական փուլին, արժանացավ մրցանակի:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

## Հավերժացվեց հիշատակը

Արշավիր Բաբայանը երկու տասնամյակից ավելի ղեկավարել է Լեռնագործների մշակույթի պալատը (այժմ՝ Կապանի մշակույթի կենտրոն): Ծննդավայրը Կավարտ գյուղն է, աշխատանքային գործունեությունը սկսել է Կապանի պղնձահանքային կոմբինատում՝ փականագործի մասնագիտությամբ: Այնուհետեւ տեղափոխվել է Կապանի պետթատրոն որպես դերասան: Զորակոչվել է պարտադիր զինծառայության, զորացրվելուց հետո կրկին աշխատել պետթատրոնում: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին, Կերչի համար մղվող մարտերից մեկում ծանր վիրավորվել: Հաղթանակից հետո վերադարձել է հարազատ կոլեկտիվ, իսկ 1947 թվականից Զանգեզուրի հանքվարչության ակումբի վարիչն էր: 1960 թվականին նշանակվել է Կապանի մշակույթի պալատի տնօրեն: Օժտված էր կազմակերպչական ունակություններով, սկզբունքայնությամբ, մարդկային հմայքով, սկսած գործն անպայման ավարտին հասցնելու պատրաստակամությամբ:

Ծանրակշիռ է նրա ավանդը Կապանի մշակութային գործի կազմակերպման, գեղարվեստական ինքնագործունեության զարգացման, Կապանի ինքնագործ խմբերի՝ տարբեր փառատոնների մասնակցությունն ապահովելու գործում: Արշավիր Բաբայանն ակտիվորեն մասնակցել է շրջանի հասարակական-քաղաքական կյանքին, արժանացել խրախուսանքների՝ մեդալների, պատվոգրերի, շնորհակալագրերի: Իսկ 1972-ի հունիսին հանրապետության Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով նրան շնորհվել է ՀԽՍՀ կուլտուրայի վաստակավոր գործչի կոչում: 1982-ին անցել է վաստակած հանգստի:

Հուլիսի 24-ին Կապանի Ս. Մելիք-Ստեփանյան փողոցի N40 շենքի պատին, որտեղ 1980-1989 թվականներին ապրել է Ա. Բաբայանը, փակցվեց հուշատախտակ, որը բացելու պատիվը տրվեց նրա զավակներին՝ Սուսաննա, Ալբերտ, Աիդա Բաբայաններին: Հիշատակի խոսքեր ասացին գեղանկարիչ Բորիս Մինասյանը (հուշատախտակը նրա ձեռքի գործն է), Սուսաննա Մարտիրոսյանը, ով ներկայացրեց Ա. Բաբայանի՝ մշակույթի պալատը ղեկավարելու մի ժամանակահատվածը: Մշակութային գործչի ավագ դուստրը՝ Սուսաննա Բաբայանը հիշարժան դրվագներ ներկայացրեց հոր կյանքից, երախտագիտություն հայտնեց ներկաներին՝ նրա հիշատակը հարգելու համար:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

**ՅԱՎԱԿՅՈՒԹՅՈՒՆ** «Սյունյաց երկիր» թերթի խմբագրությունը Մարտուն Նուրիջանյանի անժամանակ մահվան կապակցությամբ ցավակցում է հանգուցյալի ընտանիքին, հարազատներին եւ մտերիմներին:

**ՎԱՃԱՌՎՈՒՄ Է** 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 766 425:

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ** Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի, ֆիզիկայի եւ անգլերենի ուսուցչի թափուր տեղերի համար:
Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:
Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:
Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ օգոստոսի 26-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:
Փաստաղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:
Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 30-ին ժամը 11:00-ին Կապանի N1 հիմնական դպրոցում, հասցեն՝ Լեռնագործների 16:
Տեղեկությունների համար զանգահարել 5-26-26 հեռախոսահամարով:

**Սյունյաց երկիր**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
**«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»**
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
**ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63,**
**(091) 45 90 47,**
**(077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 28.07.2016թ.: